ՄՆԱ՞Լ ԹԷ՞ ԳՆԱԼ. ՀՀ ԳՏՆՈՒՈՂ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

ԳԱՅԻԱՆԷ ՅԱԿՈԲԵԱՆ
gayik20@gmail.com

ՆԱԽԱԲԱՆ

Յեղասպանութիւնից յետոյ ձեւաւորուած Սփիւռքը եւ աշխարհի տարբեր երկրներում հայ համայնքների գոյութիւնը հզօր ներուժ են համարւում Հայաստանի Հանրապետութեան ժողովրդագրական, ընկերատնտեսական, քաղաքական, մշակութային զարգացման առումով: ՀՀ անկախացումից յետոյ սփիւռքահայերի մօտ աշխուժացաւ թէ՛ կամաւոր, թէ՛ բնակած երկրների տնտեսական ու պատերազմական իրավիճակի հետեւանքով դէպի հայրենիք վերադարձը: Դրանից անմասն չմնաց նաեւ սուրիահայ համայնքը, որի կարեւոր մէկ մասը ՀՀ տեղափոխուեց Սուրիայում ընթացող պատերազմի պատճառով:

Ազգային պատկանելիութեան գիտակցումն ու հայրենիքի յիշողութիւնը միասնականացնում են հայերին՝ որպէս ազգ, բայց անմիջական ու առօրէական շփման ու փոխազդեցութեան ժամանակ երեւան հանում միմեանց ճանաչելու եւ յարմարուելու դժուարութիւնները: Սուրիահայերը, որոնք ապրում էին այլ քաղաքական ու ընկերատնտեսական յարաբերութիւնների համակարգում, այլ կրօնական ու մշակութային միջավայրում, տեղափոխուել են բոլորովին նոր, իրենց կենցաղից տարբեր ընկերամշակութային միջավայր՝ կանգնելով վերջինիս յարմարուելու խնդրի եւ անհրաժեշտութեան առջեւ: Նոր հասարակութիւնում նրանց պատշաճեցումի գործընթացը դժուարացնող գործօնները բազմաթիւ են, որոնցից իւրաքանչիւրն իր ուրոյն ազդեցութիւնն ունի ՀՀում համարկուելու եւ յետագայ կենսագործունէութիւնը շարունակելու որոշման կայացման վրայ: Սոյն յօդուածում փորձել ենք վերլուծել 2011ից յետոյ ՀՀ տեղափոխուած սուրիահայերի ներգաղթային վարքագիծը, բացայայտել դրա փոփոխման միտումները, պատճառներն ու գործօնները:

Ուսումնասիրութեան մեթոդաբանական հիմքը ազգագրութիւնում եւ էթնօընկերաբանութիւնում ընդունուած միջուսմունքային համալիր մօտեցումներն են, իսկ գործնական նիւթը հաւաքուել է 2014-17ին հեղինակի կողմից Երեւանում եւ ՀՀ մարզերում անցկացրած հետազօտութիւնների ընթացքում, որոնք իրականացուել են որակական եւ քանակական միքանի մեթոդների համադրութեամբ.

1ա. Քանակական հետազօտութիւն (2014ին)՝ 184 կիսաճշտուած հարցազրոյցներ սուրիահայերի հետ Երեւանում եւ մարզերում, մասնաւորապէս՝ Արագածոտնի, Արարատի, Արմաւիրի, Կոտայքի, Շիրակի: Ելնելով հետազօտուող խմբի իւրայատկութիւնից (սուրիահայերի ոչ-յստակ թուաքանակ, շարժունութիւն, բնակութեան վայրի վերաբերեալ սուղ տեղեկա-

տուութիւն, ՀՀ տեղափոխուելուց յետոյ տարածական ցրուած ձեւով ապրել եւ այլ հանգամանքներ) սուրիահայ ընտանիքների հետ կապ հաստատելու համար օգտագործուել է «ձնակոյտ»ի մեթոդը, իսկ հարցուողի ընտրութիւնը կատարուել է պատահականութեան սկզբունքով՝ կիրառելով վերջին ծնունդի մեթոդը[1]:

1բ. Քանակական հետազօտութիւն 2016-17ին տեղացի եւ սուրիահայ ընտանիքների շրջանում՝ Երեւան քաղաքում եւ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սիւնիքի, Արմաւիրի, Արագածոտնի մարզերի վեց քաղաքային եւ քսան գիւղական բնակավայրերում: Ընտրանքային համախմբութեան ծաւալը կազմել է 384, որից 7%ը՝ սուրիահայ ընտանիքներ: Քանակական հետազօտութեան արդիւնքները հարուստ նիւթ են ապահովել ժամանակային որոշակի կտրուածքով սուրիահայերի պատշաճեցման հիմնախնդիրներն ուսումնասիրելու, ինչպէս նաեւ ներգաղթային վարքագիծը բացայայտելու համար:

2. Որակական հետազօտութիւն (2014ին)՝ խորքային հարցազրոյցներ սուրիահայերի հետ՝ նրանց խնդիրներն կարելի համապարփակութեամբ հասկանալու, մեկնաբանելու համար: Ընտրանքի չափանիշներ են հանդիսացել սեռը, տարիքը եւ զբաղուածութիւնը (խորքային հարցազրոյցների ընդհանուր թիւը կազմել է 36):

ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սուրիահայ համայնքը եղել է Մերձաւոր Արեւելքի ամենահին ու աւանդական համայնքներից մէկը, արեւմտահայերէնի եւ արեւմտահայ մշակոյթի պահպանման ու զարգացման կարեւոր եւ բացառիկ օճախ: Սակայն 2011ին ծայր առած պատերազմը ճակատագրական եղաւ այդ համայնքի եւ հազարաւոր սուրիահայերի համար. նրանք ցրուեցին աշխարհով մէկ, հեռանալով աւելի ապահով վայրեր՝ Լիբանան՝ մօտ 15,000, եւրոպական երկրներ, Քանատա՝ մօտ 8000, Յորդանան՝ 2000, իսկ մօտ 15,000 մնացել են Սուրիայում[2]: Նշենք նաեւ, որ ՀՀ Սփիւռքի նախարարութեան (ՍՆ) տնօրինութեան տակ եղած տեղեկութիւնների համաձայն՝ 22-25,000 հայ դեռեւս շարունակում է բնակուել Սուրիայում, որոնք երկրում տիրող իրավիճակի բարդութիւնից կախուած՝ մաս-մաս տեղափոխւում են ՀՀ եւ այլուր, իսկ ոմանք որոշել են մնալ տեղում[3]:

Սուրիահայերի տարերային ներհոսք սկսուեց նաեւ դէպի ՀՀ: Պաշտօնական տեղեկատուութեան համաձայն՝ միայն 2013ին ՀՀ է եկել 6-7000 մարդ: Այս միջակայքային տատանումը վկայում է այն մասին, որ ստոյգ հաշուառում չի եղել: Առհասարակ, սուրիահայերի ներգաղթի հոսքի փաստագրման կամ տուեալների հաւաքման որեւէ մեքենայ ու համակարգ չի գործել՝ բացի ՀՀ պետական սահմանը հատելու ու վիզա ստանալու օրինապատշաճ ընթացակարգերից: Ըստ ՍՆ տրամադրած տուեալների[4]՝ 2014 Փետրուարի դրութեամբ ՀՀում բնակւում են շուրջ 11,000 սուրիահա-

յեր՝ մօտ 2800 ընտանիք: 2017ին արդէն շրջանառում է այն տեղեկատուութիւնը, որ պատերազմի բռնկուելուց իվեր մօտ 22,000 մարդ է եկել ՀՀ[5], որոնք անընդհատ գտնւում են շարժման մէջ: Համաձայն ոչ-պաշտօնական տեղեկատուութեան՝ ՀՀում ներկայումս բնակւում են 5-8000 սուրիահայեր[6]:

2014ին անցկացրած հետազօտութեան տուեալներով՝ սուրիահայերի 53%ը ՀՀ է եկել 2012ին, 23%ը՝ 2013ին, իսկ 24%ը՝ 2014ին: Հիմնական մեծ զանգուածը կազմում են հալէպահայերը՝ 82.6%, այնուհետեւ դամասկահայերը՝ 5.4%: ՀՀում են ապրում նաեւ Սուրիայի հայաշատ այլ բնակավայրերից (Քեսապ, Քամիշլի, Ռաքքա, Տէր Զօր) եկած հայերը (ընդամէնը 5.5%): Հարցմանը մասնակցած սուրիահայերի 6.5%ն էլ ՀՀ է տեղափոխուել երրորդ երկրից՝ Քուէյթ, Լիբանան, Շուէտ եւն., որոնք, լինելով Հալէպ քաղաքի հիմնական բնակիչներ, թողել են Սուրիան պատերազմի պատճառով եւ մինչեւ ՀՀ տեղափոխուելը՝ եղել այլ երկրներում: Ինչպէս տեսանք, սուրիահայերի մեծ մասը քաղաքաբնակ է՝ ի տարբերութիւն Ի. դարում Սուրիայից ներգաղթածների, որոնք առաւելապէս գիւղաբնակ էին եւ աւելի հեշտ էին բնակութիւն հաստատում Երեւանից դուրս այլ վայրերում[7]:

Ստեղծուած իրավիճակում Սուրիայից հեռանալու պատճառը մէկն էր, իսկ ՀՀն ընտրելու դրդապատճառները՝ բազմաթիւ եւ տարբեր: Հետազօտութեան արդիւնքները վկայում են, որ ՀՀ տեղափոխուելու որոշում կայացնելու գործում սուրիահայերի համար հայրենիքի գաղափարը առաջնային է միւս պատճառների նկատմամբ (38.3%, աղիւսակ 1):

Աղիւսակ 1. Սուրիահայերի՝ Հայաստան գալու պատճառները, %	
Պատճառներ	**%**
Հայրենիքի գաղափար, հայ լինելու հանգամանք	38.3
Այլ ելք չկար, միւս երկրները վիզա չէին տալիս	18.5
Ընկերային ցանցի առկայութիւն (բարեկամներ/ծանօթներ ունեն)	7.8
Ընտանիքի անդամները նախօրօք են տեղափոխուել/վաղուց ապրում են ՀՀում	7.8
ՀՀում ապահով, անվտանգ է	7.0
Լեզուի իմացութիւն	6.4
ՀՀ շրջագայութիւնից յետոյ չեն կարողացել վերադառնալ Սուրիա	6.0
Աշխատանքի հեռանկար ՀՀում	2.0
Այլ (մեկնել երրորդ երկիր, ՀՀն մօտ է, ՀՀում էժան է կեանքը եւն.)	6.2
Ընդամէնը	100

Դրդապատճառների մէջ յաջորդ մեծ պատասխանն ունի հարկադրական երանգ (ուրիշ տարբերակ չկար՝ 18.5%), երբ այլ ելքերի բացակայութեան պայմաններում սուրիահայը ստիպուած լքում է պատերազմի մէջ գտնուող երկիրը եւ գալիս ՀՀ:

...Վերջին գալս վեց ամիս առաջ էղաւ՝ որպէս գաղթական: Մենք բաւական երկար սպասել ենք Հալէպ՝ յոյսով, որ անպայման կը բարելաւուի, բայց յոյսներս կտրեցինք ու էկանք: Անցած տարի ամառը Հալէպ քաղաքը իւր արուարձաններով շրջափակուեցաւ, չորս ամիս շատ խայտառակ վիճակ մը ունեցաւ, շատ խղճալի էր վիճակը: Բանակը միայն մինակ մը միջոց ապահովեց մեզի՝ մենք մութ գիշերով զնտանով փախանք, յետոյ զինուորական օդանաւով եկանք Լաթաքիա, Լաթաքիայէն՝ Լիբանան, Լիբանանէն՝ Հայաստան (56 տ. տղամարդ, ք. Երեւան)[8]:

Մի կողմից՝ պատահական, միւս կողմից՝ հարկադրական հարթութեան մէջ պէտք է դիտարկել այն փաստը, որ 2012ի ամռանը շրջագայութեան նպատակով ՀՀում գտնուող սուրիահայերը (6%) չկարողացան վերադառնալ Սուրիա: Սակայն, ինչպէս տեսնում ենք, պատասխանների մեծ մասը վկայում է ստեղծուած իրավիճակը նրանց կողմից բանականօրէն գնահատելու մասին՝ ընկերային ցանցի առկայութիւն (7.8%), ընտանիքի անդամների ՀՀում գտնուելու փաստ (7.8%), հայերէնի իմացութիւն (6.4%), աշխատանքի հեռանկար (2%), ՀՀի՝ ապահով, անվտանգ լինելու փաստ (7%), ՀՀն՝ որպէս տարանցիկ երկիր (1.4%) եւն.: Նշենք, որ ՀՀ քաղաքացիութիւն ստանալը սուրիահայերին թոյլ է տալիս մեկնել այլ երկիր՝ նրանց համար ապահովելով ինչպէս տեղաշարժի ազատութիւն, այնպէս էլ որոշակի իրաւաքաղաքական պաշտպանուածութիւն:

ՀՀ գտնուող սուրիահայերի ճնշող մեծամասնութիւնն այժմ բնակւում է Երեւանում, մի որոշ զանգուած նաեւ՝ ՀՀ տարբեր մարզերում: Երեւանում բնակուող սուրիահայերն ունեն իրենց նախընտրութիւնը վարչական շրջանների առումով. նրանք հիմնականում կենտրոնացած են Կենտրոն եւ Արաբկիր համայնքներում: Այնուհետեւ, համեմատաբար մեծ խումբ են կազմում Էրեբունի, Շէնգաւիթ, Աջափնեակ համայնքներում ապրողները: Մեր ուսումնասիրութիւնը հետաքրքիր օրինաչափութիւն է բացայայտել մարզերի պարագայում՝ նրանք կա՛մ նախընտրում են մարզկենտրոնները (օրինակ, Գիւմրի), կա՛մ Երեւանին մօտ գտնուող քաղաքային եւ գիւղական համայնքները (Վաղարշապատ, Աբովեան, Աշտարակ, Առինջ, Ջրվէժ եւն.):

ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ, ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ

Սուրիահայ համայնքի զարգացման յաջորդ փուլի մասին պատկերացում ունենալու համար շատ կարեւոր է նրանց՝ ՀՀից հեռանալու մտադրութիւնների ու ցանկութիւնների եւ սրա հիմքում ընկած գործօնների համալիր վերուծութիւնը, որը կը ներկայացնենք համեմատական հետազօտական տուեալների միջոցով: Սոյն վերլուծութեան հիմքում ընկած են ամերիկացի ընկերաբան Էւերէթ Ս. Լիի մօտեցումները: Ըստ Լիի առաջ քաշած մոդէլի՝ գործում են ներգաղթային գործօնների տարբեր խմբեր՝

վանող, ձգող, միջանկեալ եւ անձնական: Նա գաղթի վանող երեւոյթների շարքին դասում է տնտեսական (գործազրկութիւն, եկամուտների ցածր մակարդակ, բարձր հարկեր), ընկերային եւ քաղաքական (աղքատութիւն, խտրականութիւն, խղճի եւ հաւատի ազատութեան սահմանափակում, պատերազմներ) բնոյթի գործօնները, անբարենպաստ բնակլիմայական պայմանները եւն.: Ձգող գործօններից են համարւում տնտեսական զարգացման եւ եկամուտների բարձր մակարդակը, անվտանգութիւնը, աշխատաշուկայում մուտք գործելու հնարաւորութիւնը եւն.: Գաղթի գործընթացում կարեւոր են նաեւ միջանկեալ գործօնները, որոնք մեծանում են հեռաւորութեան աճին զուգահեռ եւ կարող են հանդէս գալ որպէս գաղթի հոսքերը սահմանափակող միջոցներ: Դրանց թուին են պատկանում փոխադրութեան ծախսերը, տեղաշարժերի կարգաւորման օրէնքները, տեղեկացուածութիւնը եւն.: Ըստ նրա՝ գաղթն ընտրովի գործընթաց է, եւ նոյն գործօնները տարբեր մարդկանց վրայ կարող են տարբեր կերպ ազդել[9]: Ինչպէս տեսանք, այս մօտեցման մէջ հեղինակը կենտրոնանում է տնտեսական գործօնների վրայ: Սուրիահայերի դէպքում եւս ականատես կը լինենք նրանց գաղթի վարքագծի հիմքում ընկած տնտեսական գործօնների գերակայութեանը:

Ըստ համեմատական հետազօտութեան արդիւնքների՝ երեք տարիների ընթացքում սուրիահայերի՝ ՀՀից հեռանալու մտադրութիւնների հարցում որոշակի փոփոխութիւններ են տեղի ունեցել (աղիւսակ 2):

Աղիւսակ 2.- Սուրիահայերի՝ ՀՀից մեկնելու մտադրութիւնը		
	2017	2014
Ոչ	25	40
Հաւանաբար ոչ	22.8	16
Հաւանաբար այո	20.7	4
Այո	31.5	40

Առաջին բանը, որ կարող ենք արձանագրել, հետեւեալն է.- նրանք համեմատաբար աւելի հաստատակամ են իրենց մտադրութիւններում եւ որոշումներում՝ յստակ արտայայտելով սեփական դիրքորոշումը եւ նուազ տեղ թողնելով հաւանականութեանը: Այս հարցի հետ կապուած երկրորդ փոփոխութիւնը վերաբերում է զանգուածների փոփոխութեանը՝ ՀՀից հեռանալու մտադրութիւն ունեցողները նուազել են 8.2%ով (այստեղ ի նկատի ունենք հաւանաբար այո եւ այո պատասխանողներին), բայց վերջիններս գրեթէ լիովին կողմնորոշուած են այս հարցում: Ընդհանուր առմամբ, ՀՀ տեղափոխուելու առաջին տարիներին սուրիահայերի կէսից աւելին՝ 52.2%ը (հաւանաբար կը մեկնեն՝ 20.7, այո, կը մեկնեն՝ 31.5), մտադրութիւն ունէր հնարաւորութեան դէպքում տեղափոխուել ՀՀից, եւ միայն մէկ չորրորդն էր վստահաբար մտածում, որ կը մնայ: Այստեղ որոշակի մաս է կազմում նաեւ հաւանաբար չմեկնողների խումբը (22.8%), ինչը եւս հաւա-

նականութեան որոշակի աստիճանով մեծացնում էր մեկնելու տրամադրուածութիւն ունեցողների զանգուածը: Տարիներ անց արդէն սուրիահայերի կէսից քիչն է մտադրութիւն յայտնում մեկնել (44%), եւ տասից չորսն արդէն վստահաբար մտածում է ՀՀում կեանքը շարունակելու մասին: Այս ցուցանիշի փոփոխութիւնը պայմանաւորուած է նաեւ այն հանգամանքով, որ նրանք, որոնք 2014ին մտածում կամ ցանկութիւն էին յայտնում այլ երկիր տեղափոխուելու, արդէն կատարել են իրենց քայլը՝ կեանքի այդ փուլի համար ՀՀն համարելով ժամանակաւոր ապաստան:

Հետազօտութեան արդիւնքները հնարաւորութիւն են տալիս բացայայտելու ՀՀից մեկնելու մտադրութիւն ունեցողների զանգուածը միքանի ցուցիչներով եւ համեմատական վերլուծութեամբ (աղիւսակ 3):

Աղիւսակ 3.- ՀՀից մեկնելու մտադրութիւն ունեցողներն ըստ ցուցիչների («այո» եւ «հաւանաբար այո» տարբերակներ)

Ցուցիչներ		2017	2014
Սեռ	Արական	41.7	55.6
	Իգական	46.2	48.9
Տարիք	18-35	60.0	66.7
	36-55	58.3	50.0
	56 եւ բարձր	12.5	39.1
Ամուսնական կարգավիճակ	Ամուրի	57.1	53.8
	Ամուսնացած	43.8	55.1
	Ամուսնալուծուած	-	0.0
	Այրի	-	25.0
Բնակութեան վայր	Երեւան	44.0	52.4
	Այլ քաղաք	-	66.7
	Գիւղ	-	42.9
Աշխատանքի առկայութիւն	Այո	42.9	41.7
	Ոչ	45.5	55.9
Բնակարանի տեսակ	Սեփական բնակարան	-	36.4
	Վարձակալած բնակարան	38.9	52.9
	Առանց վարձավճարի բնակարան	-	66.7
	Հանրակացարան	80.0	57.1
ՀՀ տեղափոխուելու տարի	2012	57.1	42.9
	2013	75.0	71.4
	2014	25.0	54.5
	2014ից յետոյ	50.0	-
Որ երկիրն է ընկալւում՝ որպէս հայրենիք	Սուրիա	-	85.7
	Հայաստան	-	43.1

Եթէ ՀՀ այցելելու առաջին տարիներին աւելի շատ տղամարդիկ էին մտածում երկրից հեռանալու մասին, ապա ներկայումս՝ կանայք, ինչը պայմանաւորուած է տղամարդկանց զբաղուածութեան փաստով. ՀՀում

նրանց աշխատանքի/գործի առկայութիւնը երկրից չհեռանալու կարեւոր գործոններից մէկն է համարւում, իսկ երկրից դուրս աշխատանքը՝ յատկապէս վերջին տարիներին սկիզբ առած սուրիահայ տղամարդկանց աշխատանքային գաղթը, կանանց անհանդուրժողութեան եւ, հետեւաբար, ՀՀից մեկնելու մտադրութիւնների ձեւաւորման պատճառ է դառնում:

Տարիքային առումով նկատում ենք, որ մեկնելու տրամադրութիւն ունեցողների զանգուածը նուազում է երիտասարդներից դէպի աւագ սերունդ, ընդ որում, վերջին շրջանում աւագ սերնդի ներկայացուցիչներն եռակի նուազ են հակուած ՀՀից հեռանալու մտքին: Միջին սերնդի ներկայացուցիչների շրջանում, ընդհակառակը, փոխուել են տրամադրութիւնները, եւ մօտ 8%ով աւելացել է ՀՀից հեռանալու մտադրութիւն ունեցողների կշիռը:

Ամուսնացած սուրիահայերը, տարիների ընթացքում աւելի շատ յարմարուելով հայաստանեան իրականութեանը, աւելի քիչ են ՀՀից մեկնելու մտադրութիւն յայտնում: Իսկ չամուսնացածները, ընդհակառակը, մեծամասամբ ցանկանում են հեռանալ երկրից, ընդ որում, վերջին տարիներին՝ աւելի շատ:

ՀՀից մեկնելու մտադրութիւն ունեցողները մեծամասամբ մարզային քաղաքներում, այնուհետեւ՝ Երեւանում ապրող սուրիահայերն են, իսկ գիւղերում բնակուողների կէսից շատը չի մտածում այլ երկիր գնալու մասին:

Սուրիահայերի համար աշխատանքի բացակայութիւնը հիմնական գործոններից մէկն է, որը վճռում է ՀՀում մնալ-չմնալու հարցը: Այս հարցին աւելի մանրամասն կ'անդրադառնանք ստորեւ, սակայն աղիւսակ 3ի տուեալները թոյլ են տալիս ասելու, որ արտագաղթելու մտքին աւելի շատ հակուած են աշխատանք չունեցողները, քան՝ ունեցողները, ընդ որում, նոր տեղափոխուած տարիներին նման տրամադրուածութիւնն աւելի ակնառու է եղել:

Բնակարանի առկայութիւնը յաջորդ կարեւոր գործօնն է, քանզի ՀՀից մեկնելու մտքին աւելի քիչ հակուած են բնակարան ունեցող, իսկ աւելի շատ՝ առանց վարձավճարի բնակարաններում ապրող սուրիահայերը: Վերջինս բխում է «մինչեւ ե՞րբ ենք այս կարգավիճակում ապրելու» հարցից, իսկ նման անորոշութիւնն ու որեւէ հեռանկարի բացակայութիւնը չեն կարող չտանել արտագաղթի տրամադրութիւնների ձեւաւորմանը: Այստեղ պէտք է հաստատել, որ հանրակացարաններում ապրող սուրիահայերի գերակշիռ մասը, յատկապէս վերջին տարիներին, անհեռանկարային է համարում ՀՀում մնալը:

ՀՀ ժամանելու տարեթուով եւս կարելի է բացատրել սուրիահայերի մտադրութիւնները: Պարզւում է որ երկրից մեկնելու մտադրութիւն աւելի շատ յայտնել են 2013ին տեղափոխուածները: Սա այն ժամանակն էր, երբ սուրիական հակամարտութիւնն աւելի սուր ու տարածական էր դարձել, եւ հայերը Սուրիայում մնալու կամ հեռանալու մասին մտածելու ժամանակ ու

հնարաւորութիւն չունէին: Իսկ նման հարկադրուած ներգաղթը, բնականաբար, մի օր յանգեցնելու էր նաեւ արտագաղթի հաստատակամ մտադրութիւնների ձեւաւորմանը:

ՀՀից մեկնելու տրամադրուածութեան չափման հարցում ոչ-պակաս կարեւոր ցուցիչ է համարւում նաեւ հայրենիքի ընկալման գաղափարը: Գիտակցական եւ ենթագիտակցական մակարդակներում Սուրիան հայրենիք համարող հայերի գերակշիռ մեծամասնութիւնը (85.7%) ՀՀում ապագայ չտեսնելով, մտադիր է մեկնել երկրից: Այս ցուցանիշն ակնյայտ է նաեւ համեմատութեան մէջ, երբ նկատում ենք, որ ՀՀն՝ որպէս հայրենիք ընդունողները երկու անգամ քիչ են մեկնելու մտադրութիւն ունեցողների զանգուածում (43.1%):

Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցած սուրիահայերի մեծ մասը (70.7%) ՀՀն է համարում իր հայրենիքը, 22.8%ը՝ Սուրիան, իսկ 6.5%ը դժուարացել է ընտրութիւն կատարել երկու երկրների միջեւ: Խորքային հարցազրոյցներում նրանք զգացմունքային եւ իմացական խորը մտքեր են հաղորդում «հայրենիք» եզրոյթի մասին. ոմանք տրամաբանական համեմատութիւնների միջոցով, ոմանք վերացական արտայայտութիւններով, ոմանք էլ իրականութիւնը իրատես գնահատելով տալիս են հասկացութեան էութիւնը (աղիւսակ 4)[10]:

Աղիւսակ 4.- Սուրիահայերի պատկերացումները հայրենիքի մասին
էստէղ է հայրենիքը: Ուրիշ տեղ ո՞նց կը համարես հայրենիք: Ինչքան էլ էնտեղ մեզի համար ապրեր ենք, բայց շատ մանրամասնութիւններ կան, եթէ կը նայես, կը տեսնես, որ այնտեղ մեզի օտար եղեր են: Օրինակ, մեզի՝ խանութ ունեցողներուս, կամ, թէկուզ, աշխատող բանուորներուն արաբները միշտ էլ խփում էին, քիչ մըն ալ կռիւ լինում էր: Արաբները առաջին խօսքն ըսեր են՝ դուք գացէ՛ք ձեր երկիրը: Տենց բաներ շատ ա լինում: Բայց որովհետեւ մենք ապրել ենք դիկտատուրայի երկրում, էնտեղ չէիր կարայ ո՛չ նախագահին հայհոյէիր, ո՛չ վատ բան ըսէիր: Դրա համար, որ տենց սխալներ էին լինում, մենք վախում էինք, ասում էինք՝ չէ՛, արաբները լաւն են: Ո՞վ ըսաւ... (49 տ. տղամարդ, ք. Երեւան):
Հայրենիքը իմ համար զգացումն ա: Հայրենիքը, եթէ հողը պիտի համարենք, ես հայրենիք ուրեմն կը համարեմ էդ հողը, որտեղ ես իմ սիրած մարդկանց հետ եմ: Էդ հանգստութիւնը, որ ես էս հողի վրայ հանգիստ եմ, ինձի համար կարեւոր է: Եթէ ապրելու պիտի գաս, էդ զգացումը պիտի զգաս՝ իբր հայրենիքի: Էդ մարդիկ են, որ քեզ էդ զգացումը տալիս են, եւ ոչ թէ հողն ա: Հիմա ուզում եմ ծնողներուս էստեղ բերեմ, որ հարիւր տոկոս զգամ՝ թէ՛ հողով, թէ՛ զգացական, իմ հայրենիքը Հայաստանը եղաւ արդէն: Իրանք որ հոս են, ես որտեղ ալ գնամ, Հայաստանն ա իմ հայրենիքը (32 տ. տղամարդ, ք. Երեւան):
Ասի ամենէն դժուար եւ բարդ հարցն է: Եթէ ես հայրենիք պիտի համարեմ, պիտի հասնեմ Եդեսիա, Ուրֆա. հայրերուս երկիրը ատիկա էր: Բայց այս վայրկեանին, երբ որ Սուրիան ինձի գրկեր, գուրգուրեր, մշակեր է, ես Սուրիան իմ հայրենիքս կը համարեմ: Պիտի վրադ խնդամ, եթէ ըսեմ, որ Երեւանն իմ

հայրենիքս է: Բայց հպարտ եմ, որ ես հայ եմ, եւ այս մէկ պատառ հողը ունիմ, որ այսօր եկեր եւ այստեղ նստեր եմ (55 տ. կին, ք. Երեւան):

Դժուար հարց է: Իմ կարծիքով, սփիւռքահայի հայրենիքը սփիւռքն է: Երբ մենք գաղթականութեան ժամանակ եկանք Սուրիա, ասինքն՝ աս է մեր հայրենիքը: Փաստօրէն դա չեղաւ: Մենք թողեցինք այն վտանգի մէջ ու եկանք: Եկանք Հայաստան ու հասկցանք, որ Հայաստանն ալ մեր հայրենիքը չէ: Մեր հայրենիքը սփիւռքն է: Հիմա շատ սուրիահայեր կան, որ մոլի կերպով կը համարեն, որ իրենց հայրենիքը Սուրիան է, բայց չեմ կրնայ ըսեմ՝ մնացե՞լ են հոն, թէ՞ չէ: Իսկ նրանք, ովքեր եկան ու նորէն դուրս եկան Հայաստանէն, փաստօրէն, իրենք ալ Հայաստանը հայրենիք չհամարեցին: Միգուցէ մեր հայրենիքը մի օր դառնայ Ֆրանսիան, Գերմանիան, Շուէդիան, կամ, չեմ գիտեր, ուրիշ մի երկիր:
Շատերը կ'ըսեն՝ մեր հայրենիքը Արեւմտահայաստանն է. եթէ այն անկախանայ, կը լինի քո հայրենիքը, եթէ չէ՝ դու չունիս հայրենիք, փաստօրէն: Սփիւռքահայի հայրենիքը սփիւռքն է. ես սա կ'ըսեմ դժբախտաբար (56 տ. տղամարդ, ք. Երեւան):

Ծննդավայր-հայրենիք հասկացութիւնների փոխկապուածութեան վերլուծութիւնը եւս որոշակի օրինաչափութիւններ է բացայայտում այս առումով: Ըստ ուսումնասիրութեան արդիւնքների՝ ակնյայտ ընդհանրութիւն է նկատւում Սուրիայի փոքր բնակավայրերում (Քամիշլի, Քեսապ, Տէր Զօր, Ռաքքա, Լաթաքիա, Հոմս, Արաբ Փունար) եւ Հայաստանում ծնուած հայերի մօտ, քանզի նրանց մտքերում եւ զգացմունքներում հայրենիքը միանշանակ ագուցւում է ՀՀի հետ: Արաբական երկրների մեծ քաղաքներում ծնուած սուրիահայերը (Դամասկոս, Պէյրութ, Քուէյթ), կանգնելով երկընտրանքի առաջ, հարցը լուծում են՝ հաւասարապէս կարեւորութիւն տալով երկու երկրներին: Բոլորից տարբեր է տրամադրութիւնը հալէպահայերի շրջանում. թէպէտ մեծ մասը կողմնորոշուած է դէպի ՀՀ, սակայն նրանց մէջ տասից երկուսը բոլոր առումներով՝ ընդհուպ մինչեւ հայրենիքի ընկալման մակարդակ, ամուր կապուած է սուրիական հողին:

Այնուամենայնիւ, սուրիահայերն ունեն ՀՀից հեռանալու իրենց պատճառները, որոնց մեծ մասը ընկերատնտեսական բնոյթ է կրում: Ինչպէս ՀՀ տեղափոխուելու առաջին տարիներին, այնպէս էլ 5-6 տարի անց սուրիահայերին անհանգստացնում են ՀՀի վատ ընկերային պայմաններն ու տնտեսութեան անբարենպաստ վիճակը, աշխատանքի եւ սեփական բնակարանի բացակայութիւնը, ցածր աշխատավարձն ու աշխատանքային ծանր պայմանները, սեփական գործի ստեղծման դժուարութիւններն ու դրանից ստացուած ցածր եկամուտը, որոնք, ընդհանուր վերցրած, կարեւոր ազդեցութիւն են ունենում նաեւ նրանց գաղթի վարքագծի ձեւաւորման վրայ: Եթէ առաջին տարիներին այն ամենակարեւոր գործօնն էր (72%, աղիւսակ 5), ապա վերջին տարիներին, աւելի խորանալով, դառնում է գերակայ պատճառ բոլոր պատճառների մէջ (84.6%):

Աղիւսակ 5.- ՀՀից հեռանալու պատճառները	Տարի եւ %	
Պատճառներ	2017	2014
Ընկերա-տնտեսական պատճառներ	84.6	72.0
Մշակութային-հոգեբանական պատճառներ	7.7	14.0
Ընտանիքի միաւորում	7.7	10.5
Իրաւական խնդիրներ	0.0	3.5
Ընդամէնը	100.0	100.0

ՀՀ տեղափոխուելու առաջին տարիներին սուրիահայերը նաեւ մշակութային եւ հոգեբանական մեծ ցնցում են ապրել, ինչը ոչ միայն որոշակի հետք է թողել, այլեւ ոմանց համար՝ ՀՀից հեռանալու պատճառ հանդիսացել: Վերջինս, սակայն, տարիների ընթացքում պակաս կարեւոր է դառնում եւ զիջում իր տեղը ՀՀն լքելու պատճառների մէջ:

Սուրիահայերից ոմանք ՀՀ էին եկել ոչ թէ ամբողջական, այլ կիսուած ընտանիքներով: Հետեւաբար, ընտանիքի վերամիաւորումը եւս ապագայի հարցում որոշում կայացնելու գործընթացում որոշակի տեղ է զբաղեցնում, եւ, ինչպէս տեսնում ենք հետազօտութեան արդիւնքներից, այն սուրիահայերի մի որոշ զանգուածի համար (10.5%) կատարուել/կատարուելու է ոչ թէ ՀՀի ներսում, այլ նրա սահմաններից դուրս: Տարիների ընթացքում այս հարցը եւս գնալով լուծում է ստանում՝ աւելի քիչ յաճախականութեամբ (7.7%) հանդիպելով երկրից հեռանալու պատճառների մէջ:

Եթէ ՀՀից հեռանալու պատճառներն աւելի շատ բանական են եւ ընկերատնտեսական հիմքեր ունեն, ապա ՀՀում մնալու խթանները մեծամասամբ զգացական են եւ հոգեբանական երանգներ ունեն: Այսպէս, ՀՀում մնալու դրդապատճառների մէջ մեծ կշիռ է ստացել ՀՀն՝ որպէս հայրենիք ընկալելու եւ նրա նկատմամբ սիրոյ խոստովանութեան երեւոյթը: Եթէ 2014ի հետազօտութեան արդիւնքներով այն կազմում էր 43.1%, ապա 2017ին այն աւելի մեծ յաճախականութիւն է գրանցել (54.2%, աղիւսակ 6)՝ ցոյց տալով սուրիահայերի՝ հայրենիքի նկատմամբ սիրոյ եւ դրական տրամադրուածութեան աճը:

Աղիւսակ 6.- ՀՀում մնալու դրդապատճառները	Տարի եւ %	
Պատճառներ	2017	2014
Հայաստանում անվտանգ է	16.7	22.2
Սա է մեր հայրենիքը, սիրում եմ այն	54.2	43.1
Ունեմ աշխատանք/սեփական գործ	8.3	2.8
Յարմարուել եմ Հայաստանի կեանքին, լեզուն գիտեմ	20.8	22.2
Այլ երկիր գնալու հնարաւորութիւն չունեմ	-	6.9
Ուզում եմ ՀՀին օգտակար լինել	-	2.8
Ընդամէնը	100.0	100.0

Յաջորդ՝ մեծ յաճախականութիւն գրանցած երկու պատասխանները վկայում են սուրիահայերի կողմից ստեղծուած իրավիճակը համարժէք գնահատելու մասին՝ ՀՀից չհեռանալու դրդապատճառները բացատրելով երկրի անվտանգ լինելու եւ արդէն յարմարուելու փաստով: Սուրիահայերի մի որոշ զանգուած էլ խոստովանում է այլ երկիր գնալու հնարաւորութեան բացակայութեան մասին:

Ինչպէս նշուեց վերեւում, սուրիահայերի համար աշխատանքի եւ սեփական գործի առկայութիւնը ՀՀում մնալու կարեւոր խթան է հանդիսանում: Եւ եթէ առաջին տարիներին այն քիչ յաճախականութեամբ է հանդիպել, ապա ներկայումս երեք անգամ աւելի ծանրակշիռ հանգամանք է համարւում նրանց՝ այլ երկիր չմեկնելու որոշման կայացման հարցում (2014՝ 2.8%, 2017՝ 8.3%, աղիւսակ 6):

ՀՀից հեռանալու ցանկութիւն յայտնած եւ որոշում կայացրած սուրիահայերի մի մասն աւելի վճռական է դարձել վերջին տարիներին՝ երկրից հեռանալու ուղղութեամբ արդէն որոշակի քայլեր ձեռնարկելով: Եթէ առաջին տարիներին նրանց մէջ մօտաւորապէս տասից մէկն էր գտնւում գործողութեան փուլում, ապա 2017ի հետազօտութեան արդիւնքներով պարզ է դառնում, որ ոչ միայն մօտ երեք անգամ շատացել է նրանց թիւը, այլեւ այդ քայլերն են դարձել բազմաբնոյթ՝ ձեռք բերուած ՀՀ քաղաքացիութիւնից հրաժարուել, տարբեր երկրների դեսպանութիւններ դիմել, այլ երկրներում գործ հիմնել եւն.:

Եթէ ՀՀ տեղափոխուելու առաջին տարիներին շատ սուրիահայեր, որոնք դեռ յոյս ունէին, որ իրավիճակը կը կարգաւորուի եւ Սուրիան կը վերագտնի իր նախկին հզօրութիւնը, ցանկանում եւ մտածում էին վերադառնալ այնտեղ, ապա վերջին տարիներին նրանք աւելի իրատես են մտածում՝ մօտ չորս անգամ կրճատելով Սուրիա վերադառնալու հաւանականութիւնը (աղիւսակ 7):

Աղիւսակ 7.- Ո՞ր երկիր են նախընտրում մեկնել	Տարի եւ %	
Երկրներ	2017	2014
Սուրիա	9.1	37.3
Քանատա	18.2	5.1
ԱՄՆ	9.1	11.9
Արաբական երկրներ	9.1	1.7
Եւրոպական երկրներ	-	30.4
Դժուարանում է պատասխանել	54.5	13.6
Ընդամէնը	100.0	100.0

Այդ տարիներին նրանց համար, Սուրիայից բացի, նախընտրելի եւ իրատեսական էր մեկնել նաեւ եւրոպական երկրներ (Շուէտ, Ֆրանսիա, Գերմանիա, Պելճիքա, Աւստրալիա, Հոլանտա), ԱՄՆ եւ Քանատա, որտեղ, իրենց կարծիքով, ապաստան եւ տնտեսական ու ընկերային աջակ-

ցութիւն կը գտնեն: Վերջին շրջանում սուրիահայերի համար ընդունող երկրներից ամենահաւանականը մնում է Քանատան: Անորոշութիւնը շարունակւում է նաեւ այս իմաստով. նրանք թէպէտ ցանկանում են գնալ ՀՀից, սակայն կէսից շատը դժուարանում է ասել, թէ՝ ուր: Իսկ, ընդհանուր առմամբ, թուարկուած հաւանական երկրների ցուցակը թոյլ է տալիս ասելու, որ սուրիահայերն ընդունող երկրի հետ էթնօմշակութային ընդհանրութիւնները նկատւում են երկրորդական՝ առաջնայնութիւն տալով ընկերատնտեսական բաղադրիչին: Եւ պատահական չեն նաեւ այն ցուցանիշները, որոնք ստացուել են «ի՞նչ պայմանների փոփոխութեան դէպքում չէք մեկնի Հայաստանից» հարցադրման արդիւնքում: Գործօնների մէջ ամենամեծ զանգուած (46.1%) կազմել են այն պատասխանները, որոնցում աշխատանք/լաւ աշխատանք ունենալն է համարուել պարտադիր պայման՝ ՀՀում մնալու համար: Միւս գործօնները դասակարգուել են հետեւեալ կարեւորութեամբ՝ աշխատանքի դիմաց բարձր վարձատրութիւն, սեփական բնակարանի առկայութիւն, սեփական գործ ստեղծելու հնարաւորութիւն/ցածր հարկեր, քաղաքական համակարգի փոփոխութիւն, հարազատների /ընտանիքի անդամների հետ վերամիաւորում, իրաւական խնդիրների լուծում, մարդկանց բարեհամբոյր վերաբերմունք (համապատասխանաբար՝ 17.1%, 13.2%, 5.3%, 5.3%, 5.3%, 2.6%, 2.6%): Այս ամենի հետ մէկտեղ պատասխանների 2.5%ը պնդում է որ անկախ որեւէ իրավիճակի փոփոխութիւնից, սուրիահայերը վճռական են տրամադրուած ՀՀից հեռանալու հարցում:

Ըստ փորձագիտական գնահատականների՝ տարիների ընթացքում էական փոփոխութիւններ են տեղի ունեցել այս հարցում. սուրիահայերի այն խումբը, որը մտածում էր ՀՀից հեռանալ, արդէն տեղափոխուել է այլ երկիր, իսկ ՀՀում ներկայումս բնակուող սուրիահայերը, որոնք, իդէպ, ըստ իրենց գնահատականների, կազմում են ընդհանրապէս ՀՀ եկած սուրիահայերի մօտ մէկ երրորդը, այստեղ մշտական բնակութեան մտադրութիւն ունեցող խումբն է:

Մեր ուսումնասիրութիւնների շրջանակում հայաստանաբնակ հայերը եւս յայտնել են իրենց տեսակէտը՝ գտնելով որ սուրիահայ ընտանիքների վերադարձը ՀՀ ներգաղթ չէ, եւ երկրի մի փոքր վերականգնումից յետոյ նրանց գերակշիռ մասը կը վերադառնայ Սուրիա: Չնայած մշակութային եւ տնտեսական կեանքում սուրիահայերի դերակատարութիւնը կարեւորելուն՝ տեղացիների մօտաւորապէս 70%ը կիսում է նման տեսակէտ (աղիւսակ 8), որոնց մէջ մեծ խումբ են կազմում կանայք՝ տղամարդկանց համեմատութեամբ (համապատասխանաբար 71.6% եւ 67.5%), գրեթէ հաւասարաչափ աւագ եւ միջին սերունդը, ապա՝ երիտասարդները (համապատասխանաբար 70.8% եւ 70.4%, 67.5%ի համեմատ), մարզային քաղաքների բնակիչները, երեւանցիները, ապա՝ գիւղաբնակները (համապատասխանաբար 76.1%, 68.0%, 66.7%):

Աղիւսակ 8.- Գաղթի վարքի վերլուծութիւն, փոխադարձ պատկերացումներ, %			
Դատողութիւններ	Համա-միտ եմ	Համա-միտ չեմ	Դժ. Պատ.
Սուրիահայերն առաջին հնարաւորութեան դէպքում կը վերադառնան Սուրիա	69.9	17.8	12.3
ՀՀ հայերն առաջին հնարաւորութեան դէպքում կը հեռանան ՀՀից	88.0	8.0	4.0
Սուրիահայերը կը հաստատուեն ՀՀում	40.9	46.2	12.8
ՀՀ հայերն ամէն ջանք գործադրում են ՀՀում մնալու համար	16.0	68.0	16.0

Հայաստանից արտագաղթելու հարցը քննարկման առարկայ է դառնում ոչ միայն սուրիահայերի դէպքում, այլ նաեւ՝ սուրիահայերի համար, քանզի նրանք եւս նկատել ու ձեւաւորել են սեփական պատկերացումները հայաստանցիների գաղթի վարքագծի վերաբերեալ: Այս պարագայում սուրիահայերը աւելի մեծ զանգուած են կազմում (88%)՝ կարծելով, որ տեղացի հայերն առաջին հնարաւորութեան դէպքում կը հեռանան ՀՀից: Սուրիահայերի կարծիքով՝ տեղացիների արտագաղթելը, անշուշտ, մեծ կապ ունի երկրի ոչ-արդիւնաւէտ կառավարման եւ ընկերատնտեսական խնդիրների հետ: Կարեւոր պատճառների թուին նրանք դասում են նաեւ հեշտ, բայց օտար ճանապարհ ընտրելու հայաստանցիների որդեգրած «ռազմավարութիւնը», հայրենիքին ծառայելու նրանց ցանկութեան բացակայութիւնը: Սուրիահայերի մէջ տաս հոգուց եօթը մտածում է, որ տեղացին ոչ մի ջանք չի գործադրում ՀՀում մնալու եւ արտագաղթի ճամփան չբռնելու համար (աղիւսակ 8): Ինչպէս քանակական, այնպէս էլ որակական գնահատականներով նրանք արտայայտում են հարցի վերաբերեալ իրենց դիրքորոշումը.

...Այստեղի երիտասարդները չեն ուզեր մնալ Հայաստանում, այստեղի համար մի բան անել: Չէ՛, իրենք ուզում են գնալ Ռուսաստան: Հոն ի՞նչ կայ, չեմ հասկանում: Այստեղ է քո հայրենիքը, պէտք է մնաս եւ պայքարիս անոր համար: Ռուսաստանն արդէն հասել ա իրա հասնելիք տեղը (կին, 22 տարեկան, ք. Երեւան)[11]:

Գործը անհնար է հոս: Անոր համար մենք ամէն օր կ'ըսենք՝ ի՞նչ պիտի ըլլայ: Միայն մեզի համար չէ՝ իբրեւ սուրիացի կամ սփիւռքահայ: Արդէն տեղացին կը փախնի, կ'երթայ երկրէն: Ես անոր համար ցաւ կը զգամ՝ ինչո՞ւ, ինչո՞ւ մենք պիտի էրթանք՝ իբր հայ, ուրիշին ստրուկ ըլլանք, որ քիչ մը փող շահինք: Ես ինչո՞ւ չկարողանամ իմ երկրիս մէջ ապրիմ, երկիրս զարգացնեմ (կին, 58 տարեկան, ք. Երեւան)[12]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Սուրիահայերի գաղթի վարքագծի համեմատական վերլուծութիւնը ցոյց է տալիս ՀՀից հեռանալու նրանց տրամադրուածութեան փոփոխութիւնը. եթէ ՀՀ տեղափոխուելու սկզբնական շրջանում նրանց կէսից աւելին, ապա 4-5 տարի անց՝ կէսից քիչն է այլ երկիր մեկնելու ցանկութիւն եւ մտադրութիւն յայտնում: Իդէպ, նրանք այդ հարցում աւելի վճռական են դառնում վերջին տարիներին՝ երկրից հեռանալու ուղղութեամբ իրատես քայլեր ձեռնարկելով: Եթէ առաջին տարիներին նրանց մէջ մօտաւորապէս տասից մէկն էր գտնւում մեկնելու գործողութեան փուլում, ապա տարիներ անց ոչ միայն շատանում է նրանց թիւը, այլ նաեւ այդ քայլերն են դառնում տարաբնոյթ՝ ձեռք բերուած ՀՀ քաղաքացիութիւնից հրաժարուել, տարբեր երկրների դեսպանութիւններ դիմել, այլ երկրներում գործ հիմնել եւն.:

Եթէ ՀՀ տեղափոխուելու առաջին տարիներին շատ սուրիահայեր, յուսալով որ Սուրիան կը վերագտնի իր կայունութիւնը, ցանկանում էին վերադառնալ, ապա վերջին տարիներին նրանք աւելի սթափ են մտածում՝ մօտ չորս անգամ կրճատելով Սուրիա վերադառնալու հաւանականութիւնը: Եւ եթէ այդ տարիներին նրանց համար նախընտրելի ու իրատեսական էր մեկնել եւրոպական երկրներ, ԱՄՆ եւ Քանատա, ապա վերջին շրջանում ամենահաւանական երկիրը մնում է Քանատան՝ սուրիահայերի մեծ մասին կանգնեցնելով «ուր մեկնել» հարցի առաջ:

Տարիների ընթացքում փոխւում է նաեւ գաղթի պատճառների յարաբերակցութիւնը. ՀՀն լքելու հիմքում ընկած ընկերատնտեսական գործօնը շարունակում է առաջնային մնալ՝ 4-5 տարի անց աւելի խորանալով, իսկ մշակութային եւ հոգեբանական բնոյթի գործօններն աստիճանաբար յաղթահարւում են պատշաճեցումի փուլերի ընթացքում:

Հարկ ենք համարում նշել, որ մենք այս ուսումնասիրութիւնը ամբողջական չենք նկատում. այն արժէ շարունակական դարձնել, յաւելել նոր հարցադրումներ, բացել նոր երեսակներ՝ ըստ յառաջացած նոր պայմանների ու պարագաների: Յամենայնդէպս, նման ուսումնասիրութիւնների բազմահարթակ քննարկումները, կարծում ենք, կարող են օգտակար դառնալ ՀՀ հայրենադարձութեան, սփիւռքի հետ յարաբերութիւնների զարգացման, սփիւռքում հայրենիքի գաղափարի ամրապնդման, Սփիւռքի՝ ՀՀում ներդրումներ կատարելու, տնտեսա-մշակութա-կենցաղային նպաստ յառաջացնելու, ՀՀի բարենպաստ զարգացման սատարող քաղաքականութիւններ որդեգրելու համար: Այս գործընթացի հաջողութիւնը, որը բխում է ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Սփիւռքի շահերից, պահանջում է անդադար աշխատանք՝ երկու կողմերի գործօն մասնակցութեամբ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Օգտագործում է ընկերաբանական հետազօտութիւններում՝ հարցուողի ընտրութեան պատահականութիւնն ապահովելու համար:

[2] M. Zolyan, "Refugees or Repatriates? Syrian Armenians Return to Armenia," 2015, https://www.opendemocracy.net/od-russia/mikayel-zolyan/refugees-or-repatriates-syrian-armenians-return-to-armenia *(ընթերցուած 01.07.2017ին):

[3] «Սուրիական Հակամարտութեան Հետեւանքով Հարկադիր Տեղահանուած Եւ Հայաստանում Պաշտպանութիւն Հայցող Անձանց Ինտեգրման 2018-2022 Թուականների Ռազմավարութիւն», https://www.e-draft.am/projects/679/about#_Toc484420214 :

[4] Տուեալները փոխանցուել են ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի 2014 Փետրուարի 13ի թիւ 2470-34 գրութեան համաձայն:

[5] https://armenpress.am/arm/news 23 Յունիս 2017:

[6] Փորձագիտական հարցազրոյց՝ «Սուրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող Կենտրոն» հասարակական կազմակերպութեան տնօրէնի հետ (25 Հոկտեմբեր 2018):

[7] Ա. Ստեփանեան, *Սուրիահայերը Երեւանում. Աւանդականը եւ Արդիականը Հայոց Մշակոյթում, XVI*, Երեւան, «Գիտութիւն» Հրատ., 2014, էջ 318:

[8] Գայիանէ Յակոբեան, Դաշտային ազգագրական նիւթեր, 2014 (այսուհետեւ՝ Յակոբեան, ԴԱՆ):

[9] Everett S. Lee, "A Theory of Migration", *Demography*, , 1966:1(3), էջ 47-57:

[10] Յակոբեան, ԴԱՆ:

[11] Նոյն:

[12] Նոյն:

TO STAY OR TO LEAVE: THE ATTITUDE OF THE SYRIAN-ARMENIAN IMMIGRANTS IN ARMENIA

(Summary)

GAYANE HAKOBYAN
gayik20@gmail.com

Due to the war in Syria, large numbers of its centuries-old Syrian-Armenian minority have been scattered throughout the world. Some took refuge in Lebanon, Jordan, and the Republic of Armenia, while others migrated to the US, Canada, Australia and European countries.

The paper highlights the attitude and migratory trends of the Syrian-Armenian community in the Republic of Armenia. Basing her analysis on data collected from two extensive surveys, conducted in 2014 and 2016/7, and field studies, the author examines various issues related to the integration of the Syrian-Armenian migrants in Armenia, issues like identity, fatherland, kinship, etc. Concurrently the author discusses the reasons behind their different decisions to stay or leave the country and notes that unemployment, accommodation and difficulties in coping with new conditions are among the main causes of dissatisfaction.